LOS ANGELES ՎԱՐՉԱՇՐՋԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

2022

DEAN C. LOGAN
Գրանցող-արձանագրություն պահող/վարչաշրջանի քարտուղար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ 3

VCA-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ LOS ANGELES ՎԱՐՉԱՇՐՋԱՆՈՒՄ 4

ԲԱԺԻՆ 1 – ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՊԼԱՆԸ 5

1-A ԲՅՈՒՋԵ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 6

1-B ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ 7

1-C ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ 10

1-D ԿԱՅՔԷՋԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 13

1-E ԼԵՋՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 13

1-F ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 14

ԲԱԺԻՆ 2 – ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԿՂԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ 17

2-A ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ 17

2-B ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԿՂԵՐ 19

ԲԱԺԻՆ 3 – ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԱՍԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 19

3-A ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԼՈԳԻՍՏԻԿԱ ԵՎ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

3-B ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 21

3-C ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԱՍԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 21

ԲԱԺԻՆ 4 – ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ 22

4-A ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ 22

4-B ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 22

4-C ԿԻԲԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 23

4-D ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ 23

ԲԱԺԻՆ 5 – ԱՌԱՋ ԸՆԹԱՆԱԼՈՎ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Los Angeles վարչաշրջանը (Վարչաշրջան) տեղական ամենամեծ քվեարկելու իրավասություն ունեցող վարչաշրջանն է երկրում՝ ունենալով ավելի քան 5.7 միլիոն գրանցված ընտրողներ 4100 քառակուսի մղոն տարածքում: Գրանցող-արձանագրություն պահող/վարչաշրջանի քարտուղարը (RR/CC) պատասխանատու է, որպեսզի կառավարի տեղական, նահանգային և դաշնային ընտրություններն այս իրավասության վարչաշրջանում և ապահովի, որ բոլոր ընտրողներն ունենան գիտելիքներ, մատչելիություն և հնարավորություն՝ մասնակցելու մեր ժողովրդավարական գործընթացին: RR/CC-ն շարունակաբար և ջանասիրաբար աշխատում է, որպեսզի բարելավի քվեարկման փորձառությունը՝ իրեն հանրայնորեն պատկանող և հանրության համար նախատեսված՝ Քվեարության լուծումներ բոլոր մարդկանց համար (VSAP) համակարգի միջոցով, միաժամանակ հեռացնելով հավանական արգելքները կամ խոչընդոտները, որոնք կարող են ընտրողին կանխարգելել ընտրություններին մասնակցելուց: VSAP-ի լուծումը ժամանակակից, մատչելի և անվտանգ քվեարկման փորձառություն է, որը ձգտում է ապահովել, որ վարչաշրջանի ընտրողներն ունենան քվեարկելու ավելի մեծ հնարավորություններ՝ տրամադրելով ընդլայնված ընտրանքներ այնպես, որ լինի հարմարավետ, մատչելի, անվտանգ և համահունչ ողջ California-ում քվեարկելու ընտրանքներն ընդլայնելու ջանքերին:

California նահանգը (Նահանգ) նույնպես ձեռնարկել է աննախադեպ քայլեր, որպեսզի ընդարձակի քվեարկելու մատչելիությունը և արդիացնի ընտրելու մասին օրենքը՝ վերասահմանելով, թե ընտրություններին ինչպես, երբ և որտեղ կարող է ընտրողը քվեարկել: Սենատի 450-րդ օրինագիծը՝ California-ի ընտրողների ընտրության մասին օրենքը (VCA) մշակվել էր այս մատչելիությունը դյուրացնելու նպատակով:

Այս փաստաթղթում մանրամասնորեն նշված է, թե ինչպես է RR/CC-ն պլանավորում կրթել ընտրողներին իրենց ընտրության իրավունքների և հնարավորությունների մասին, ինչպես տեղաբաշխված, տեղադրված կլինեն քվեարկության կենտրոնները և քվեաթերթիկները հանձնելու արկղերի տեղամասերը և դրանց պահպանումը, մանրամասներ քվեարկության կենտրոնի դասավորության, քվեարկության սարքավորումների և անձնակազմի պլանների, անվտանգության ու չնախատեսված իրավիճակներում գործողությունների պլանների և հաջորդ քայլերի վերաբերյալ:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

VCA-ն վարչաշրջաններին է տրամադրում հիմնարար շրջանակ, որով կարելի է ընտրողներին առաջարկել ընդլայնված ընտրանքներ՝ տրամադրելով ավելի մեծ ճկունություն և հարմարավետություն: VCA մոդելի հիմնական տարրերն են.

- Ճկուն, անձամբ քվեարկության ընտրանքները թույլ կտան ընտրողներին կատարել իրենց քվեն իրենց բնակության վարչաշրջանի ցանկացած Քվեարկության կենտրոնում 11-օրյա ժամանակահատվածում:
- Քվեարկության կենտրոններում տրամադրվում են ընտրողների բարելավված ծառայություններ և աջակցություն, այդ թվում՝ ընտրողների պայմանական գրանցում:

- Ընդլայնված Փոստային քվեարկության (VBM) ծառայություններ, ներառյալ անվտանգ և հարմարավետ քվեաթերթիկի հանձնման արկղեր և հանձնման վայրեր, որոնք հասանելի են Ընտրությունների օրվանից սկսած 29 օր առաջ (տես բաժին 2-B):

VCA-ի քվեարկության մոդելի հաջող իրագործումը պահանջում է, որ այն ընդունող վարչաշրջանները զգուշորեն ուսումնասիրեն իրենց առկա պայմանները և գործընթացները, ներառյալ ընտրության տեխնոլոգիան, բյուջետային հնարավորությունները, ընտրական տեղամասերը և համայնքային ներգրավվածությունը:

VCA-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ LOS ANGELES ՎԱՐՉԱՇՐՋԱՆՈՒՄ

Վարչաշրջանում VCA-ն իրականացնելու նպատակով RR/CC-ն (-Գրանցող-արձանագրություն պահող/վարչաշրջանի քարտուղար) զարգացրել է ենթակառուցվածք՝ ըստ իր առկա փոխակերպային VSAP (Քվեարկության Լուծումներ Բոլորի Համար) սկզբունքների, որոնք կենտրոնացած են ընտրողների կարիքների վրա՝ հավասարակշռված տվյալ որորտի կոմիտեների հաստատմամբ նախագծի, մատչելիության, անվտանգության, տեխնոլոգիայի, ընտրությունների կառավարման, ակադեմիական և հանրային ներգրավվածության հարցերում շահագրգիռ կողմերի, հասարակական կազմակերպությունների (CBO-ներ) և հանրության անդամների կողմից: Օգտագործելով խորհրդատվական խմբերի, հարցումների, ֆոկուս խմբերի, տեխնիկական վերլուծության և օգտվողների թեստավորման համակցումը՝ RR/CC-ն սահմանել է նախադեպ՝ ընտրողների նոր փորձառություն մշակելու բարձ գործընթացի առաջնորդումը, որը գոհացնում է նահանգային և տեղական պահանջները, բավարարում է ընտրողների կարիքները և գերազանցում է երկրի ընտրական համակարգի անվտանգության ստանդարտները:

3 մարտի 2020 թ.-ի Նախագահական նախնական ընտրություններին վարչաշրջանն իրականացրեց VSAP նախաձեռնությունը, որն ընտրողներին ծանոթացրեց մի փորձառության հետ, որը կներառի Քվեաթերթիկի նշման ամբողջովին մատչելի և անվտանգ սարք (BMD), Էլեկտրոնային գրանցամատյան (ePollbook), Ինտերակտիվ նմուշի քվեաթերթիկ (ISB), Հեռահար հասանելի փոստային քվեարկություն (RAVBM), արդիացված Tally համակարգ, 10-օրյա անձամբ քվեարկելու ընտրության վաղ տրամադրվող ժամանակահատված, քվեարկության կենտրոններ և Բջջային/Ճկուն քվեարկության ծրագիրը: VCA-ի և VSAP-ի այս նախնական իրականացման ժամանակ շուրջ 1.14 միլիոն ընտրող է քվեարկել՝ օգտագործելով իրենց VBM քվեաթերթիկը և ևս մեկ միլիոն, ովքեր ընտրել են քվեարկության կենտրոնում: Այս մասնակցությունը ներկայացնում է մոտավորապես 75% ավելացում VBM-ին և ընդհանուր 42% մասնակցություն վարչաշրջանի նախորդ նախնական ընտրություններից, որոնք կայացել էին 2018 թվականի հունիսին, որն արձանագրեց մոտավորապես 665,000 ընտրող, ովքեր օգտագործեցին իրենց Փոստային քվեարկության քվեաթերթիկը: RR/CC-ի կողմից անցկացված հարցման ժամանակ ընտրողների 70%-ը նշում էր, որ նրանք ունեին ընդհանուր առմամբ չեզոք կամ դրական փորձառություն:

Անմիջապես 3 մարտի 2020 թ.-ի Նախագահական նախնական ընտրություններից հետո Վարչաշրջանի Վերահսկիչների խորհուրդը (Խորհուրդ) ուղղորդեց, որպեսզի RR/CC-ն ընդունի VCA-ի

դրույթներն ինչպես նկարագրված են Ընտրական օրենսգրքի 4005 և 4007(c) բաժիններում՝ պահանջելով, որ Վարչաշրջանը փոստով VBM քվեաթերթիկ ուղարկի բոլոր գրանցված ընտրողներին: Այս վաղ ընդունումն ընտրողներին հնարավորություն տվեց տանից անվտանգ քվեարկել՝ չվտանգելով իրենց և իրենց ընտանիքի առողջությունը COVID-19-ի համավարակի մեկնարկի ժամանակ: Սա նշանակում էր, որ մոտավորապես 2.5 միլիոն լրացուցիչ VBM քվեաթերթիկներ փոստով ուղարկվեցին 3 նոյեմբերի 2020 թ.-ի Ընդհանուր ընտրություններին՝ համեմատած 3 մարտի 2020 թ.-ի Նախագահական նախնական ընտրությունների: Այս ընտրություններին շուրջ 3.4 միլիոն ընտրող է քվեարկել՝ օգտագործելով Փոստային քվեարկության քվեաթերթիկը և մոտավորապես 913,000 հոգի անձամբ է քվեարկել: Սա նշեց պատմական 4.3 միլիոն ընտրողի մասնակցություն և մասնակցության ավելացում՝ 58%-ից դարձնելով 76%՝ համեմատած 2018 թվականի նոյեմբերին անցկացված վարչաշրջանի նախորդ ընտրությունների ընդհանուր մասնակցությանը: Հարցումն անցկացվել էր RR/CC-ի կողմից, որը նաև արձանագրել էր ընտրողների գոհունակությունը իրենց փորձի առումով, ուր հարցման մասնակիցների 94%-ը նշել էր, որ ընդհանուր առմամբ նրանք ունեն քվեարկության չեզոք կամ դրական փորձառություն:

ԲԱԺԻՆ 1 – ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՊԼԱՆԸ

RR/CC-ն կշարունակի կրթել և բարձրացնել իրազեկվածությունն իրենց քվեարկության իրավունքների, քվեարկության ընտրանքների, VCA-ի և VSAP-ի քվեարկության փորձի վերաբերյալ՝ գրանցված և իրավասու չգրանցված ընտրողների շրջանում և ինչպես կարելի է օգտվել քվեարկության ռեսուրսներից՝ ռազմավարական հանրակրթության և իրազեկվածության քարոզարշավների միջոցով: VSAP-ի և VCA-ի իրականացումից և ընդունումից ի վեր՝ RR/CC-ն իրականացրել է երեք մեծամասշտաբ բազմալեզու և բազմամշակույթ ընտրողների կրթության քարոզարշավներ, որոնք ներգրավեցին միլիոնավոր ընտրողներ ողջ Վարչաշրջանով մեկ: Այս քարոզարշավները կիրառեցին տարբեր մարտավարություններ և ռազմավարություններ, որոնք ընտրողներին տրամադրեցին շատ կարևոր հաղորդագրություններ ավելի քան տասնյակ լեզուներով և ուղղորդեցին նրանց մեր կայքէջում ու անվճար թեժ հեռախոսահամարով առկա հանրամատչելի տեղեկատվությանը և ռեսուրսներին: RR/CC-ն կշարունակի մշակել և իրականացնել քարոզարշավներ՝ օգտագործելով տվյալներից բխող լավագույն գործելակերպերը, մոտեցումները և շուկայում հասանելի հաղորդակցության հարթակները:

Բացի այդ, RR/CC-ն կշարունակի կիրառել և ուժեղացնել իր հարաբերությունները լրատվամիջոցների տեղական և բազմալեզու ցանցերի հետ, որպեսզի ձեռք բերի լրատվամիջոցների լայն հնարավորություններ հեռուստատեսությամբ, ռադիոյով, տպագիր և թվային լրատվականներում: Այս հնարավորությունները կներառեն, սակայն չեն սահմանափակվի հարցազրույցների անցկացմամբ, մեդիա կլոր սեղաններով, լրատվական ճեպազրույցներով, ինչպես նաև լրատվամիջոցներին կիրավիրեն տարբեր հանրային միջոցառումների՝ քվեարկության և ընտրական գործընթացների մասին տեղեկանալու նպատակով: Տեղական լրատվամիջոցների հետ այս ներգրավվածությունները կստեղծեն և հանրությանը կտրամադրեն վստահելի տեղեկատվություն առաջիկա ընտրությունների

միջոցառումների, վճռորոշ վերջնաժամկետների, ընտրողների գրանցման հնարավորությունների, քվեարկության ընտրանքների և շատ այլնի մասին:

Ավելին, RR/CC-ն կշարունակի համագործակցել երկարաժամկետ գործընկերների հետ, ներառելով, սակայն չսահմանափակվելով՝ հասարակական կազմակերպությունները, Վարչաշրջանի շահագրգիռ կողմերին, շահերի պաշտպանության կոմիտեներին, քաղաքապետարաններին, ավագ դպրոցներին, համայնքային քոլեջներին և համալսարաններին: Այս գործակցությունների միջոցով RR/CC-ն կհամագործակցի և բազմաթիվ լեզուներով կտրամադրի իրազեկվածության նյութեր՝ նպատակ ունենալով բարձրացնել իրազեկվածությունը և կրթելու մեր ընդարձակ բազմամշակույթ համայնքներին, թե նրանք ինչպես կարող են օգտվել վաղ քվեարկման հնարավորություններից, խթանեն քաղաքացիական ներգրավվածությունը և ընտրողների մասնակցությունը:

1-Ա ԲՅՈՒՋԵ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

RR/CC-ի լրատվամիջոցների և իրազեկվածության բարձրացման բյուջեն 21-22 ֆինանսական տարվա համար կազմում է $6300000: Վարչաշրջանի ֆինանսական տարին ղեկավարվում է հուլիսից հունիս: Ուստի, այս բյուջեն ներառում է 7 հունիսի 2022 թ.-ին կայանալիք նահանգային ուղղակի նախնական ընտրությունները և որոշ վաղ ծախսեր, որոնք առնչվում են կրթությանը և իրազեկվածությանը 3 նոյեմբերի 2020 թ.-ին կայանալիք Ընդհանուր ընտրությունների համար: Այս բյուջեն կօգտագործվի՝ իրականացնելու մեծամասշտաբ, բազմալեզու և բազմամշակույթ ընտրողների կրթության քարոզարշավ, որպեսզի կրթի Վարչաշրջանի ընտրողներին և բնակիչներին իրենց քվեարկության իրավական իրավունքների, քվեարկության ընտրանքների և ընտրության ռեսուրսների վերաբերյալ:

Աղյուսակ 1. Ծախսերի համեմատություններն ըստ ֆինանսական տարիների

	ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ			ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ		
Ֆինանսական տարի	**Բյուջե**	**Ծախս**	**Տարբերություն**	**Բյուջե**	**Ծախս**	**Տարբերություն**
FY (ֆինանսական տարի) 17-18	$850000	$488656	$361344	$25000	$29773	$(4773)
FY 18-19	$1500000	$587216	$912784	$25000	$62216	$(37216)
FY 19-20	$7467000	$360269	$7106731	$25000	$1001	$23999
FY 20-21	$725000	$290338	$434662	$16376000	$12804721	$3571279
FY 21-22	$1700000	$970101	$729899	$4600000	-	$4600000
FY 22-23	$700000	-	$700000	$2000000	-	$2000000

1-B ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

RR/CC-ն կիրառում է տարբեր տվյալների աղբյուրներ, օրինակ՝ ընտրողների կրթվածության նախորդ քարոզարշավների մասին հաշվետվություններ, ընտրողների հանրային հարցումներ և երկրով մեկ ճանաչված տվյալների աղբյուրներ՝ որոշելու Վարչաշրջանի բազմազան բնակչության հետ արդյունավետ կերպով հաղորդակցվելու և իրազեկվածությունը բարձրացնելու լավագույն մեթոդները: RR/CC-ն կշարունակի օգտագործել տվյալներից բխող մոտեցումը, որպեսզի լավագույն կերպով սահմանի, թե ինչպես կարելի է կրթել հանրությանն իրենց քվեարկության ընտրանքների և իրավունքների վերաբերյալ՝ ուղղորդելով նրանց առցանց հասանելի, վստահելի ռեսուրսներ և մեր անվճար թեժ գծի հեռախոսահամարի միջոցով:

Լրատվության քարոզարշավները կլինեն բազմալեզու և բազմամշակույթ: Նպատակ ունենալով ապահովել Վարչաշրջանի բազմազան համայնքների ներգրավվածությունը՝ RR/CC-ն կներգրավի խոշոր ազգային հարթակներ, ինչպես նաև փոքր տեղական աութլետներ: Այս համապարփակ մոտեցումն ապահովում է, որ ընտրողներն ստանան RR/CC-ի ուղերձը որևէ մեթոդով, որով սովորաբար նրանք ստանում են նորությունները և տեղեկատվությունը:

Հեռարձակվող լրատվամիջոցներ

RR/CC-ն աշխատելու է տարբեր անգլերեն և ոչ անգլիական հեռարձակման ցանցերի և կայանների հետ հեռուստատեսությամբ և ռադիոյով՝ հանրային ծառայության հայտարարություններ պատրաստելու, տեղեկատվական հարցազրույցներ անցկացնելու և վճարովի գործողություններ իրականացնելու համար: Հանրային ծառայության հայտարարությունները, ինչպես նաև RR/CC իրազեկման այլ ջանքերը, կպարունակեն կարևոր հաղորդագրություններ գալիք ընտրությունների, գրանցման տեղեկատվության, լեզվի հասանելիության և քվեարկության տարբերակների վերաբերյալ: Այս ջանքերն ուղղակիորեն կծառայեն անգլիացի և ոչ անգլախոս քաղաքացիներին: Նախկին գործընկերները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.
՝

- ABC
- CBS
- KTLA
- FOX
- NBC
- Telemundo
- Univision
- iHeart Media
- POWER 106
- Entercom
- Entravision
- Liberman Broadcasting
- KNX
- KPCC
- NPR
- K-ABC
- KFI
- KJLH

Տպագիր լրատվամիջոցներ

RR/CC-ն կաշխատի տեղական և շրջանային տպագիր լրատվամիջոցների հետ, որպեսզի խթանի քաղաքացիական ներգրավվածություն և կրթի ընթերցողներին, թե ինչպես կարելի է գրանցվել քվեարկելու համար, ուսումնասիրել իրենց քվեարկության իրավունքները և ընտրանքները, գտնել ընտրություններին առնչվող ռեսուրսներ և քաջալերել վաղ քվեարկության մասնակցությունը: Սա ներառում է լրագրեր, ամսագրեր և տեղեկագրեր: Տպագիր լրատվամիջոցները շարունակում են ծառայել որպես վստահելի միջոց, որով կարելի է հասնել աշխարհագրորեն մեկուսացված և թերի սպասարկվող համայնքներին, ինչպես նաև այն բնակիչներին, որոնք առաջնայնորեն խոսում և կարդում են ոչ անգլերեն լեզվով: Նախորդ գործընկերները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Los Angeles Times
- LA Daily News
- Daily Breeze
- Pasadena Star News
- Long Beach Press-Telegram
- Whittier Daily News
- San Gabriel Valley Tribune
- LA Sentinel
- La Opinion
- World Journal
- The Korea Times

Թվային լրատվամիջոցներ

RR/CC-ն կշարունակի հզորացնել թվային հարթակները, որպեսզի տրամադրի տեսանյութերի գովազդներ մի շարք բազմալեզու հարթակներում, կայքէջերում և հեռարձակվող ծառայություններում՝ օգնելու հանդիպել ընտրողներին այն վայրերում, որտեղ նրանք օգտվում են իրենց նորություններից և զվարճանքից: Թվային լրատվամիջոցները կարևոր դեր են խաղում արդյունավետ լրատվության և իրազեկման պլանի հարցում, քանի որ բնակիչները տեղեկատվությունից կամ առցանց ռեսուրսներից օգտվելիս մեծապես ապավինում են իրենց բջջային կամ թվային սարքերին:

Սոցիալական լրատվամիջոցներ

RR/CC-ն կշարունակի օգտվել սոցիալական լրատվամիջոցների հարթակներից, որպեսզի տեղեկացնի Վարչաշրջանի բնակիչներին, թե ինչպես կարելի է գրանցվել քվեարկության համար և խրախուսելու ընտրողների մասնակցությունը: Սոցիալական լրատվամիջոցները մնում են ծախսերի տեսանկյունից ամենաարդյունավետ մեթոդը որոշակի լսարաններին հաղորդագրություններով թիրախավորելու և տեղեկատվությունը մեծ ծավալով տարածելու համար, որպեսզի քվեարկության և ընտրությունների

մասին ամենակարևոր տեղեկատվությունը մնա ուշադրության կենտրոնում: Բացի այդ, սոցիալական լրատվամիջոցները տրամադրում են եզակի հնարավորություն տարբեր հարթակներում հավասարակիցների ներգրավվածության համար՝ միաժամանակ նաև թույլ տալով RR/CC-ին շփվել ընտրողների հետ, հասցեագրել հարցերը, մտահոգությունները կամ վերացնել կեղծ տեղեկությունները կամ ապատեղեկատվությունը:

Կարող եք հավանել, հետևել կամ բաժանորդագրվել RR/CC-ին հետևյալ կերպ՝

- Facebook՝ facebook.com/LACountyRRCC
- Instagram՝ @lacountyrrcc
- YouTube՝ lacountyrrcc
- Twitter՝ @LACountyRRCC

Էլ.փոստային մարքեթինգ

RR/CC-ն կշարունակի հզորացնել ընտրողների գրանցման տվյալների բազային առնչվող էլեկտրոնային հասցեների իր ընդարձակ ցանկը, որպեսզի ընտրողներին ժամանակին ուղարկի վստահելի հաղորդագրություններ վերջնաժամկետների, քվեարկության հնարավորությունների վերաբերյալ, և թե ինչպես նրանք կարող են օգտվել մատչելի առցանց գործիքներից իրենց ընտրելու փորձառությունն ավելի հեշտացնելու և ավելի հարմարավետ դարձնելու համար:

Տանից դուրս

RR/CC-ն կշարունակի գնահատել և սահմանել տանից դուրս գտնվող տարբեր հնարավորություններ բնակիչներին ուղերձը փոխանցելու համար: Վերջին, ավանդական գովազդային վահանակների տրանզիտ գովազդներում, ներառյալ ավտոբուսի կայարանները և մայրուղիներին տեղադրված գովազդային վահակաները կիրառվել են, և սա կշարունակի ուսումնասիրվել՝ ախահովելու, որ ընտրությունների հիմնական տեղեկատվությունը Վարչաշրջանում հասանելի լինի բազմազան և աշխարհագրորեն մեկուսացված համայնքներին:

Ավտոմեքենայի համատեղ օգտագործում/Տրանսպորտային ընկերություններ

RR/CC-ն կշարունակի համագործակցել ավտոմեքենայի համատեղ օգտագործում ապահովող ընկերությունների, Մայրաքաղաքի տրանսպորտային իշխանության, Վարչաշրջանի Հանրային աշխատանքների վարչության և այլ տրանսպորտային ընկերությունների հետ ողջ Վարչաշրջանով մեկ՝ նպատակ ունենալով խթանել ընտրողների գրանցումը և տեղեկատվությունը՝ տրամադրելու տրանսպորտային ծառայություններ Քվեարկության կենտրոններին:

Ազդեցիկ դեմքեր եւ վստահելի սուրհանդակներ

RR/CC-ն մեր համայնքներում կշարունակի աշխատել ազդեցիկ դեմքերի եւ վստահելի սուրհանդակների հետ՝ կրթելու և մեծացնելու RR/CC-ի և իր գործընկերների միջոցով մշակված կարևոր ուղերձները:

Ուղիղ փոստային ուղարկում

Համայնքային ընտրություններում RR/CC-ն ուղղակիորեն երկու ուղղակի նամակներ կուղարկի գրանցված ընտրողներին: Ընտրողներին ուղղակիորեն աջակցելու համար RR/CC-ն կտրամադրի Քվեատուփի մոտակա վայրերը Vote by Mail փաթեթում: Քվեարկության կենտրոնի առանձին նամակագրություն կտրամադրվի յուրաքանչյուր գրանցված ընտրողի, որը ցույց է տալիս իրենց բնակությանն ամենամոտ Քվեարկության Կենտրոնները: RR/CC-ն կշարունակի օգտագործել ուղղակի փոստերը՝ որպես իրազեկման ձև, ի լրումն Քվեաթերթիկի նմուշի և փոստով քվեարկության փաթեթի՝ ընտրողներին տեղեկացնելու գալիք ընտրությունների մասին և մանրամասներ տրամադրելու ընտրությունների անձամբ և փոստով քվեարկության ժամանակացույցի վերաբերյալ: , քվեարկության մատչելի ընտրանքներ, անձամբ Քվեարկության կենտրոնների գտնվելու վայրեր, և որտեղ ընտրողները կարող են վստահելի և ապահով ընտրությունների մասին տեղեկություններ գտնել RR/CC-ի անվճար թեժ գծի կամ կայքի միջոցով:

Ըստ ընտրական շրջափուլի՝ փոստային ուղարկումները կարող են ներառել և ընտրողներին տրամադրել հետվճարային վերադարձի ձև՝ նրանց թույլ տալով խնդրել ընտրական նյութեր անգլերենից բացի այլ լեզվով կամ թարմացնել իրենց բնակության հասցեի տեղեկատվությունը:

1-C ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակ ունենալով արդյունավետորեն իրազեկել հանրությանը և տեղեկատվություն տրամադրել VSAP-ի վերաբերյալ՝ RR/CC-ն կշարունակի աշխատել Վարչաշրջանի գործընկեր գործակալությունների, քաղաքային գործավարների և CBO-ների հետ: RR/CC-ն կանցկացնի շնորհանդեսներ, անձնակազմի միջոցառումներ, կտրամադրի վերապատրաստում ու նյութեր և կապահովի, որ հանրությանը տրամադրվի հետևողական ուղերձ: Այս գործողություններին աջակցելու նպատակով RR/CC-ն ստեղծել է բազմաթիվ տեղեկատվական թերթոններ և պաստառներ, որպեսզի համայնքին լրացուցիչ տեղեկացնի և իրազեկի VSAP-ի և VCA-ի վերաբերյալ: Այս կազմակերպություններին տրամադրվող բոլոր նյութերը հանդիսանում են VSAP-ի ապրանքանիշը՝ ապահովելով հանրությանը, որ տեղեկատվությունը լինի համապատասխան, ճշգրիտ և ստացված լինի վստահելի աղբյուրից:

Համագործակցություն ողջ վարչաշրջանում/շահագրգիռ կողմեր

Հանրության իրազեկումը և կրթումը պահանջում է հավաքական գործակցություն հանրային պաշտոնյաների (ընտրված և չընտրված), կառավարության գործակալությունների, Վարչաշրջանի վարչությունների, քաղաքների, առևտրի պալատի և համայնքային այլ շահագրգիռ կողմերի կողմից: Այս կառույցներն աշխատում են համատեղ, որպեսզի կրթեն և բարձրացնեն իրազեկվածությունը քվեարկության ընտրանքների և ընտրությունների հիմնական տեղեկատվության վերաբերյալ:

Վարչաշրջանի այլ վարչությունների հետ համագործակցությունը հզորացնում է RR/CC-ի հանրությանը տեղեկատվությունը հասցնելու և կրթելու կարողությունը: Վարչաշրջանի հետևյալ կառույցները նախկինում օգնել են RR/CC-ին, և դրանցից որոշները կօգնեն ընտրողների կրթվածության և իրազեկվածության ջանքերին՝

- Գնահատող
- Լողափեր և նավահանգիստներ
- Վերահսկիչների խորհուրդ
- Գլխավոր գործադիր տնօրեն
- Սպառողների և բիզնեսի գործերով զբաղվող մարմին
- Վարչաշրջանի հաղորդակցություններ
- Այգիներ և հանգստի գոտիներ
- Հանրային գրադարան
- Հանրային սոցիալական ծառայություններ
- Հանրային աշխատանքներ
- Գանձապահ և հարկահավաք
- Աշխատուժի զարգացում, Ներգրավում և համայնքային ծառայություններ

Համայնքային միջոցառումներ

CBO-ի հարաբերությունների և վճարովի լրատվամիջոցների գործակցությունների միջոցով՝ Վարչաշրջանում միջոցառումները հյուրընկալելու և համաֆինանսավորելու հնարավորությունը կստեղծի արժեքավոր ուղի RR/CC-ի համար՝ կապի մեջ լինել հանրության հետ ընտրական նոր մոդելի առնչությամբ: RR/CC-ն ունի բազմաթիվ երկարարմյա հարաբերություններ մի շարք կազմակերպությունների և միջոցառումների համակարգողների հետ և կանցկացնի բազում հանգստյան օրեր՝ կլոր սեղաններ կազմակերպելու և հանրության ընտրություններին առնչվող նյութեր տրամադրելու համար: Աղյուսակ 2-ն ընդգծում է խոշոր միջոցառումների ընտրությունը, որոնց RR/CC-ն այս տարի այցելել է և պլանավորում է այցելել 2022 թվականին: Այս միջոցառումներից բացի RR/CC-ն հաճախել է մի քանի հարյուր համայնքային միջոցառումների:

Աղյուսակ 2. Համայնքային խոշոր միջոցառումներ

ԱՄՍԱԹԻՎ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՔԱՂԱՔ
13 փետրվարի 2022 թ.	Bell 5K Resource Fair	Bell
4 մարտի 2022 թ.	Care Harbor Resource Event	Los Angeles
5 մարտի 2022 թ.	Care Harbor Resource Event	Los Angeles
11 մարտի 2022 թ.	Latina History Day	Los Angeles
15 մարտի 2022 թ.	Townhall Voter Registration	Dominguez Hills
16 մարտի 2022 թ.	East LA Job and Resource Fair	Los Angeles
16 մարտի 2022 թ.	Gabrielino HS College and Career Fair	San Gabriel
24 մարտի 2022 թ.	SOS Event	Domingue Hills
5-31 մայիսի 2022 թ.	Pomona FairPlex	Pomona

1-D ԿԱՅՔԷՋԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

LAVOTE.GOV

RR/CC-ի պաշտոնական կայքէջը՝ LAVOTE.GOV, հանդիսանում է առաջնային ռեսուրս և վայր Վարչաշրջանի քվեարկությանն ու ընտրություններին առնչվող ողջ տեղեկատվության համար: Այս կայքէջը շարունակաբար թարմացվում է կարևոր տեղեկություններով առաջիկա ընտրությունների, ընտրողների գրանցման տեղեկատվության, քվեարկության ընտրանքների և առցանց ռեսուրսների վերաբերյալ՝ քվեարկության փորձառությունը բարելավելու նպատակով:

1-E ԼԵԶՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Los Angeles վարչաշրջանը ոչ միայն երկրի ամենաբնակեցված տեղական ընտրությունների իրավասության վարչաշրջանն է, այլ նաև ամենաբազմազաններից մեկն է: Մշակութային և լեզվական զանազանությունը Վարչաշրջանը բնութագրող հիմնական հատկանիշներից մեկն է, որը ստեղծում է թրթռուն և շարժուն ընտրազանգված: Մեր լեզվական փոքրամասնության համայնքներին աջակցելու և բաց ու ներառական գործընթաց խթանելու նպատակով RR/CC-ն տրամադրում է թարգմանված նյութեր և կայուն լեզվական աջակցություն: Ներկայումս Վարչաշրջանն ի հավելումն անգլերենի ընտրողներին առաջարկում է լեզվական աջակցություն հետևյալ լեզուներով՝

- Հայերեն
- Չինարեն
- Կամբոջերեն/Խմերերեն
- Պարսկերեն
- Կորեերեն
- Իսպաներեն
- Տագալոգերեն/ֆիլիպիներեն
- Վիետնամերեն
- Հնդկերեն
- Ճապոներեն
- Թայերեն
- Ռուսերեն
- Բենգալերեն*
- Բիրմայերեն*
- Գուջարաթի*
- Ինդոնեզերեն*
- Մոնղոլերեն*
- Տելուգու*

**Այս լեզուներով տրամադրվող ծառայությունները կբարելավվեն՝ սկսած 7 հունիսի 2022 թ.-ին՝ Նահանգային ուղղակի նախնական ընտրություններին: Ներառյալ VBM քվեաթերթիկների փոստային ուղարկումը և այս լեզուների ավելացումը Քվեաթերթիկի նշման սարքերում:*

Վարչաշրջանը հանձնառու է շարունակել իր համապարփակ մոտեցումը՝ համապատասխանելու լեզվի դաշնային և նահանգային պահանջներին և հասնելու իր նպատակին՝ բոլոր ընտրողներին տրամադրել արդար, մատչելի և թափանցիկ ընտրական ծառայություններ:

Անգլերենի սահմանափակ իմացությամբ (LEP) ընտրողների սահմանում եւ սպասարկում

Երբ անձը գրանցվում է ընտրելու համար, նա կարող է պահանջել ընտրությանն առնչվող թարգմանված նյութեր մեկ այլ լեզվով: Ցանկացած ընտրող, ով կատարում է այս հարցումը, ավտոմատ կերպով կստանա թարգմանված նմուշի քվեաթերթիկ և ընտրությունների բոլոր նյութերն իր ընտրած լեզվով: RR/CC-ն ընտրողների համար ունի նաև Բազմալեզու աջակցության թեժ գիծ, որով նրանք կարող են խնդրել ընտրություններին առնչվող թարգմանված նյութերը կամ քվեարկության կենտրոնի գտնվելու վայրերի մասին տեղեկատվությունը, ընտրողների գրանցման երկլեզու քարտերը, VBM-ի թարգմանված դիմումները և նմուշ քվեաթերթիկի բուկլետները:

RR/CC-ն մշակել է տվյալների համապարփակ թիրախավորման համակարգ, որը ներառում է ժողովրդագրական տվյալներ և լեզվական աջակցության հարցումներ բազմակի աղբյուրներից, ներառյալ տվյալներ Միացյալ Նահանգների մարդահամարից, Ամերիկյան համայնքային հարցումից, ընտրողների գրանցման դիմումներից և համայնքային խմբերի լեզվական աջակցության հարցումներից: Այս տվյալներից ձևավորվում է հաշվետվություն՝ առաջնահերթ դարձնելու քվեարկության կենտրոններում բազմալեզու անձնակազմ ունենալու հարցը՝ ըստ լեզվական աջակցության կարիքների: Ելնելով առկա տվյալներից՝ ընտրությունների իսպանախոս աշխատակիցներ ներկա կլինեն յուրաքանչյուր քվեարկության կենտրոնում:

LEP համայնքների կրթումը եւ հաղորդակցումը քվեարկության կենտրոնների մասին

RR/CC-ի Լեզվական մատչելիության խորհրդատվական կոմիտեն (LAAC), որը հիմնադրվել է 2017 թվականին, կարևոր դեր է խաղում LEP համայնքին՝ առաջիկա ընտրությունների և իրենց քվեարկության ընտրանքների մասին կրթելու համար: LAAC-ի անդամներն աջակցում են՝ հյուրընկալելով համայնքային միջոցառումներ և տարածելով թարգմանված նյութերն իրենց համայնքներում: LAAC-ի կազմակերպություններից ոմանք ներառում են՝

- Asian Americans Advancing Justice
- California Common Cause
- Center for Asian Americans United for Self Empowerment (CAUSE)
- Korean American Coalition
- League of Women Voters (LWV), Los Angeles
- NALEO Educational Fund
- National Iranian American Council
- Pars Equality Center
- South Asian Network (SAN)

- United Cerebral Palsy of Los Angeles

RR/CC-ը հանդիպում է LAAC-ի հետ եռամսյակը մեկ՝ շարունակելու համագործակցել խնդիրների շուրջ, ընդլայնել և կատարելագործել լեզվական ծառայությունները և ներգրավվել LEP համայնքների հետ: Լրացուցիչ տեղեկություններ, օրինակ՝ ինչպես մասնակցել, մասնակցել և/կամ միանալ հանձնաժողովի նիստերին, կարող եք գտնել LAVOTE.GOV կայքում:

1-F ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

RR/CC-ն ջանասիրաբար աշխատում է, որպեսզի ապահովի ընտրությունների լիակատար մատչելիություն հաշմանդամություն ունեցող մարդկանց համար և կշարունակի նշանակալի քայլեր ձեռնարկել՝ ուսումնասիրելու, հավաքագրելու, ձևափոխելու և պահպանելու մատչելի քվեարկության կենտրոնները:

Քվեարկության կենտրոնի մոդելը նախատեսված է բոլոր ընտրողներին մատչելի լինելու համար՝ ապահովելով, որ մատչելի Քվեարկության կենտրոնները մոտ տեղակայված լինեն հաշմանդամություն ունեցող ընտրողներին: Քվեարկության կենտրոնների գնահատման ընթացքում որպես քվեարկության կենտրոն դիտարկվող կառույցները պետք է բավարարեն հաշմանդամություն ունեցողների կայանման պահանջներին, ի թիվս այլ չափանիշների: RR/CC-ն համայնքին ներգրավել է իր Համայնքային ընտրողների իրազեկման կոմիտեի (CVOC) և իր Քվեարկության մատչելիության խորհրդատվական կոմիտեի (VAAC) միջոցով: Վարչաշրջանի VAAC-ը հիմնադրվել է 2006 թվականին՝ աջակցելու RR/CC-ին իրականացնել նորարարական ռազմավարություններ, որոնք բարելավում են հաշմանդամություն ունեցողների մատչելիությունը և մասնակցությունը: VAAC-ը կարևոր դեր է խաղացել RR/CC-ին աջակցելու հարցում թե նախքան ընտրությունների, թե հետընտրական գործողությունների ընթացքում:

Գործակցելով VAAC-ի հետ՝ RR/CC-ն ստեղծել էր հաշմանդամության իրազեկվածության վերապատրաստման տեսանյութ ընտրությունների աշխատակիցների համար, որպեսզի կրթի ընտրությունների աշխատակիցներին, թե ինչպես կարելի է փոխազդել հաշմանդամության լայն սպեկտր ունեցող ընտրողների հետ: Այս տեսանյութն ընդգրկված է ընտրությունների աշխատակցի վերապատրաստման ուսումնական ծրագրում և նաև կարող է օգտագործվել համայնքային խմբերի կողմից՝ տեղեկացնելու իրենց ընտրազանգվածին հաշմանդամություն ունեցող ընտրողների համար հասանելի ծառայությունների վերաբերյալ:

Համագործակցությունը մատչելիության շահերի պաշտպանության կազմակերպությունների հետ

RR/CC-ի Քվեարկության մատչելիության խորհրդատվական կոմիտեն (VAAC), որը հիմնադրվել է 2006 թվականին, կարևոր դեր է խաղում, որպեսզի ընտրողներին տեղեկացնի գործող տարբեր ծրագրերի, ծառայությունների, գործընթացների և գործիքների մասին՝ ընտրողների մատչելիությունն ավելացնելու նպատակով: VAAC-ի անդամներն օգնում են՝ հյուրընկալելով համայնքային միջոցառումներ, համագործակցելով RR/CC-ի հետ հաշմանդամություն ունեցող ընտրողների առնչությամբ և տարածելով թարգմանված նյութերն իրենց համայնքներում: VAAC-ին մասնակցող կազմակերպություններից որոշները ներառում են՝

- Ability First
- CA-ի կույրերի խորհուրդը
- CALIF-ի անկախ ապրուստի կենտրոնները
- Disability Rights California
- Շրջանային կենտրոնները
- United Cerebral Palsy Los Angeles
- Հաշմանդամության ուսումնասիրությունների և համայնքի ներառման USC կենտրոն

Համագործակցելով VAAC-ի հետ՝ RR/CC-ն կշարունակի տեղեկացնել համայնքին քվեարկության ընթացքում հասանելի հասանելիության աջակցության մասին: RR/CC-ը հանդիպում է VAAC-ի հետ եռամսյակը մեկ՝ շարունակելու համագործակցել խնդիրների շուրջ, բարելավել մատչելիության ծառայությունները և ներգրավվել հաշմանդամություն ունեցող ընտրողների հետ: Լրացուցիչ տեղեկություններ, օրինակ՝ ինչպես մասնակցել, մասնակցել և/կամ միանալ հանձնաժողովի նիստերին, կարող եք գտնել LAVOTE.GOV կայքում:

Մատչելի ծառայություններ – ISB, RAVBM, VBM եւ BMD

Վարչաշրջանի ISB-ն, RAVBM-ը, VBM-ը և BMD-ն գործիքներ են, որոնք լրացուցիչ մատչելիություն և հարմարավետություն են տրամադրում հաշմանդամություն ունեցող ընտրողներին: Այս գործիքները նախատեսվել և իրականացվել են որպես VSAP-ի լուծման հիմնական բաղադրիչներ: Գործիքները նախատեսվել և իրականացվել են՝ օգտագործելով համագործակցային, մարդակենտրոն նախագծման գործընթաց, որն ընդգրկում էր ընտրողների, ընտրական աշխատողների, համայնքային կազմակերպությունների, տեղական ընտրություններին ներկա գտնվող պաշտոնակատար անձանց և փորձագետների այնպիսի թեմաների շուրջ ինչպիսիք են՝ տեխնոլոգիան, մատչելիությունը և անվտանգությունը: Որպես այդ գործընթացի մաս՝ գործիքներն անցել են ընտրողների տարաբնույթ փորձակումներ՝ ապահովելու օգտագործման դյուրինություն և մատչելիություն: Այս գործիքները նախատեսված են՝ հաշվի առնելով 14 գլխավոր սկզբունքները: Այս սկզբունքներն են՝

1. Թափանցիկություն

2. Քվեարկության ընտրանքներ տրամադրելու կարողություն
3. Գաղտնիություն
4. Օգտագործման և մատչելիության դյուրինություն
5. Վստահություն
6. Շիտակություն
7. Անվտանգություն
8. Ծախսարդյունավետություն
9. Չափափոխելիություն
10. Ճկունություն
11. Կարգավորման դյուրինություն
12. Նվազագույն ուժ
13. Նվազագույն ծրագրավորում
14. Դյուրատարություն

ISB-ից կարելի է օգտվել վեբ հալվելվածի միջոցով, որը տեղակայված է RR/CC-ի կայքէջում: ISB-ն հասանելի է 19 լեզվով, որից կարելի է օգտվել՝ կիրառելով օժանդակ տեխնոլոգիա և նախատեսված է հեշտ օգտագործման և հասկանալու համար: ISB-ն թույլ է տալիս օգտվողին նշել իր նմուշ քվեաթերթիկը և ստեղծել Քվեարկության անցագիր, որը կարելի է տպել կամ ներբեռնել բջջային սարքով: Քվեարկության կենտրոնում ընտրության անցաթուղթն արագացնում է քվեարկության գործընթացը՝ թույլ տալով ընտրողին արագ փոխացնել իր նմուշի քվեաթերթիկի ընտրությունները BMD-ում, հաստատել կամ ձևափոխել իր ընտրությունները և ավարտել իր քվեարկման գործընթացը:

Բոլոր BMD-ներն առաջարկում են բազմակի մատչելիության առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս ընտրողներին հարմարեցնել փորձառությունն իրենց կարողություններին: Յուրաքանչյուր BMD ունի համարժեք տարածք՝ ապահովելու ընտրողներին անվասայլակներով կամ քայլակներով: Հպէկրանի ցուցասարքը կարող է կարգավորվել ընտրողների համար, ովքեր նստած կամ կանգնած դիրքում են: Անձանց համար, ովքեր ի վիճակի են կամ դժվարանում են հպէկրանն օգտագործելիս, BMD-ն ներառում է կոճակներով շոշափելի ստեղնաշար, որով կարելի է նավարկել քվեաթերթիկը և կատարել ընտրությունները: Ընտրողը նաև կարող է կարգավորել BMD-ի էկրանի տառաչափը, գույնը և հակադրությունը՝ դիտելու հարմարավետության տեսանկյունից: Յուրաքանչյուր BMD պարունակում է ներկառուցված աուդիո ականջակալ, որն ընտրողին թույլ է տալիս լսել քվեաթերթիկի մրցույթները և ընտրությունները: Ընտրողը կարող է կարգավորել աուդիոյի արագությունը և ձայնը: Բացի այդ, 2022 թվականի դրությամբ BMD-ն ներկայացնում է և աուդիո, և հպէկրանի ինտերֆեյս 20 լեզվով:

Քանի որ Վարչաշրջանի VBM քվեաթերթիկը և ծրարը նախագծվել են հեշտ օգտագործման համար, RR/CC-ն նաև առաջարկում է RAVBM-ը: Այս գործիքով ընտրողը կարող է օգտվել RR/CC-ի կայքէջում տեղակայված վեբ հավելվածից, որով կարելի է դիտել իրենց քվեաթերթիկն էկրանին ընթեռնելի ձևաչափով: Ընտրողները կարող են օգտագործել օժանդակ տեխնոլոգիաներ/սարքեր, որպեսզի կարդան և նշեն իրենց ընտրությունները: Հետո ընտրողը պետք է տպի իր քվեաթերթիկը և փոստով

ուղարկի այն RR/CC-ին կամ հանձնի քվեարկության կենտրոնում կամ քվեաթերթիկի հանձնման համար նախատեսված արկղում:

Թե անձամբ, և թե VBM-ի միջոցով կատարվող ընտրանքները թույլ են տալիս քվեարկության անկախ, գաղտնի և անվտանգ փորձառություն բոլոր ընտրողների համար:

ԲԱԺԻՆ 2 – ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԿՂԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ

VCA-ն պահանջում է, որ Վարչաշրջանը հիմնի հարմարավետ, անվտանգ և հեշտ հասանելի քվեարկության կենտրոններ և քվեաթերթիկների հանձնման արկղեր ողջ Վարչաշրջանով մեկ: Այն սահմանում է գտնվելու վայրերի ընտրության նվազագույն չափանիշները, օրերի քանակը և այս վայրերի աշխատանքային ժամերը: Վարչաշրջանն անցկացնում է ընդարձակ հետազոտություն և վերլուծություն, որպեսզի սահմանի Los Angeles վարչաշրջանի լավագույն վայրերը և մեկնարկում է իրազեկման համապարփակ քարոզարշավ՝ ընտրողներին հասանելի դարձնելով գտնվելու վայրի մասին տեղեկատվությունը: Քվեարկության կենտրոնը և քվեաթերթիկների հանձնման արկղի վայրերը հասանելի են դառնում LAVOTE.GOV կայքէջում՝ յուրաքանչյուր ընտրությունից առաջ: Գտնվելու վայրի մասին տեղեկատվությունը նաև ընտրողներին է փոխանցվում տարբեր փոստային ծրագրերի միջոցով:

2-A ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Քվեարկության կենտրոնի տեղակայվածությունը

Քվեարկության կենտրոնի ամենահամապատասխան գտնվելու վայրերը սահմանելը պահանջում է ամուր, տվյալներից բխող գործընթաց, որն ընդգրկում է նահանգային և տեղական պահանջները՝ տեղական տարածական և սոցիալ-տնտեսական պայմաններով՝ միաժամանակ կանխատեսելով մարդկանց վարքագծերը և օրինաչափությունները: RR/CC-ն կիրառում է համապարփակ ռազմավարություն, որպեսզի տեղորոշի քվեարկության կենտրոնի ամենահամապատասխան գտնվելու վայրերն իր համայնքների համար, որը գերազանցում է VCA-ի նվազագույն չափանիշները:

RR/CC-ն ներառում է հետևյալ 14 չափանիշները քվեարկության տեղամասի իդեալական տեղակայվածությունը սահմանելիս՝

1. Աշխարհագրորեն մեկուսացված համայնքներ
2. Ցածր եկամուտ ունեցող համայնքներ
3. Անգլերենի սահմանափակ տիրապետում և լեզվական փոքրամասնություն ունեցող համայնքներ
4. Տրանսպորտային միջոցների ցածր սեփականատիրության մակարդակ ունեցող համայնքներ
5. Ընտրողների բնակության կենտրոններ
6. Հեռավորությունը զբաղվածության կենտրոններից
7. Հաշմանդամություն ունեցող ընտրողներ

8. Չգրանցված իրավասու ընտրողներ
9. VBM-ի ցածր օգտագործում
10. Բարձր տեղակայվածություն ունեցող գրանցված ընտրողներ
11. Ի հայտ եկող ընտրողներ
12. Տարանցիկ մուտք
13. Երթևեկության խցանում և օրինաչափություններ
14. Հանրայնորեն մատչելի կայանատեղի

Կառույցի գնահատում Los Angeles վարչաշրջանի համար

VCA-ը պահանջում է, որպեսզի մոտավորապես 114 քվեարկության կենտրոն բաց լինի Նահանգային ուղղակի նախնական ընտրությունների օրվանից 10 օր առաջ՝ 7 հունիսի 2022 թ.-ի համար, ինչևէ, RR/CC-ի նպատակն է ունենալ 120-ը: Բացի այդ, ընտրությունների օրվանից երեք օր առաջ և ներառյալ այդ օրը VCA-ն պահանջում է, որպեսզի Վարչաշրջանում առնվազն 568 քվեարկության կենտրոն բաց լինի, սակայն RR/CC-ի նպատակն է ապահովել 640-ը:

Քվեարկության կենտրոնները վերջնականացնելու և հաստատելու նպատակով RR/CC-ն անցկացնում է համապարփակ հարցումներ յուրաքանչյուր հավանական տեղամասի համար՝ ապահովելու մատչելիություն և էլեկտրաէներգիայի ու ցանցի համապատասխան կապ: Հարցումների ավարտից հետո RR/CC-ն կվերջնականացնի կառույցի օգտագործման ստորագրված համաձայնագրերի միջոցով՝ նշելով հատուկ ամսաթվեր, ժամեր և սենյակային տեղաբաշխվածություն յուրաքանչյուր քվեարկության կենտրոնում:

Քվեարկության կենտրոնների աշխատանքային ժամերը

Քվեարկության կենտրոնները բաց կլինեն ընտրությունների օրվանից ևս 10 օր առաջ՝ ընտրողներին թույլ տալով քվեարկել երկու հանգստյան օրերին քվեարկության կենտրոնի գտնվելու վայրերում: Քվեարկության կենտրոնները բաց կլինեն օրական առնվազն 9 ժամ քվեարկության ժամանակահատվածի առաջին 10 օրերի ընթացքում և ընտրությունների օրը սկսած առավոտյան 7:00-ից մինչև երեկոյան 8:00-ը:

2-B ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԿՂԵՐ

Քվեաթերթիկների հանձնման արկղերի գտնվելու վայրերը շատ կարևոր են, որպեսզի ապահովեն ավելի շատ մատչելիություն ընտրողների համար, հատկապես նրանց համար, ովքեր ապրում են գյուղական վայրերում, ովքեր հաճախակի են ճամփորդում և ովքեր Վարչաշրջանի սահմաններից դուրս են աշխատում: Համաձայն VCA-ի՝ քվեաթերթիկների հանձնման արկղերը պետք է լինեն անվտանգ, մատչելի և կողպված՝ որքան հնարավոր է մոտ գտնվելով հանրային տրանսպորտի հաստատված երթուղիներին: Քվեաթերթիկների հանձնման արկղերը պետք է բաց լինեն սովորական աշխատանքային ժամերին ոչ ուշ քան ընտրությունների օրվանից 29 օր առաջ և ներառյալ այդ օրը: Բացի այդ, պետք է առնվազն քվեաթերթիկի հանձնման մեկ արկղ լինի, որը մատչելի, անվտանգ և հասանելի է օրական առնվազն 12 ժամ, ներառյալ սովորական աշխատանքային ժամերը:

Քվեաթերթիկների հանձնման արկղերի գտնվելու վայրերի համար տրամադրվող խորհուրդները որոշվում են՝ համաձայն VCA-ի չափանիշների և աշխարհագրական տեղաբաշխվածության: Ըստ VCA-ի Վարչաշրջանից պահանջվում է ունենալ քվեաթերթիկների հանձնման առնվազն 379 արկղ 7 հունիսի 2022 թ.-ի Նահանգային ուղղակի նախնական ընտրությունների համար: Ներկայումս RR/CC-ն ունի 24-ժամյա գործող քվեաթերթիկների հանձնման 380 արկղ, որոնք տեղադրված են ողջ Վարչաշրջանով մեկ: Վարչաշրջանային նախորդ ընտրություններին համահունչ լինելու նպատակով 7 հունիսի 2022 թ.-ին կայանալիք Նահանգային ուղղակի նախնական ընտրություններից առաջ, քվեաթերթիկների հանձնման լրացուցիչ 20 արկղ կտեղադրվի՝ ընդհանուր թվով 400 արկղ: Քվեաթերթիկների հանձնման արկղերի ավելացված գտնվելու վայրերը ենթարկվում են հետագա գնահատումների, որը նման է 2-B բաժնում նշված քվեարկության կենտրոնի գործընթացին: Բացի այդ բոլոր քվեարկության կենտրոնները նաև կծառայեն որպես քվեաթերթիկների հանձնման արկղերի վայրեր:

ԲԱԺԻՆ 3 – ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԱՍԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

3-A ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԼՈԳԻՍՏԻԿԱ ԵՎ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Los Angeles վարչաշրջանի քվեարկության կենտրոնի մոդելը նախատեսված է ապահովելու մասնակցության տարբեր մակարդակներ ողջ Վարչաշրջանում: Վարչաշրջանը կտեղակայի քվեարկության կենտրոններ՝ օգտագործելով մոտավորապես երեք չափի փոփոխություններ՝ փոքր, միջին և մեծ (տես աղյուսակ 3): Յուրաքանչյուր քվեարկության կենտրոն կունանա ընտրության 5-ից 27 աշխատակից՝ քվեարկության ժամանակահատվածում կախված բաց օրերի չափից և քանակից: Մինչև ութ (8) երկլեզու խոսացողներին կարող են հանձնարարվել, որպեսզի նրանք լրացնեն լեզվական պահանջներ քվեարկության կենտրոնի կամ դրան հարակից տեղամասերի համար:

Աղյուսակ 3. Քվեարկության կենտրոնի չափի շեմեր		
Քվեարկության կենտրոնի չափը	**Պահանջվող քառակուսի ֆուտը**	**Աջակցվող BMD-ները**
Փոքր	1775 – 3274	**15 - 20**
Միջին	3275 – 4499	**25-30**
Մեծ	**>4500**	**35-45**

Ստորև պաշտոնները RR/CC-ի կողմից սահմանված ընտրությունների աշխատակիցների դերերն են քվեարկության կենտրոնում՝

- **Ղեկավար** – Վերահսկում է քվեարկության կենտրոնի բոլոր գործողությունները, այդ թվում քվեարկության կենտրոնի բացումը և փակումը, հասցեագրում է հարցերը/խնդիրները և ամենօրյա կտրվածքով քվեաթերթիկներ է ապահովում Գրանցման կենտրոնների (CIC) համար:
- **Ղեկավարի օգնական** – Աջակցում է ղեկավարին բոլոր պարտականությունների հարցում և ստանձնում է ղեկավարի դերը նրա բացակայության դեպքում:
- **Հերթի հսկիչ** – Ողջունում է ընտրողներին, պատասխանում է ընդհանուր հարցերի և ուղղորդում է նրանց համապատասխան պատասխանատուի մոտ (օրինակ՝ գրանցման գործավար, VBM-ի գործավար և այլն): Ապահովում է, որ հերթը համապատասխանաբար պահպանվի՝ աջակցելով և ուղղորդելով ընտրողներին ISB-ի գործընթացում և հրահանգներ տրամադրելով, թե ինչպես կարելի է օգտվել BMD-ից: Մոտակա քվեարկության կենտրոնները թվարկող ձեռնարկը ընտրողների համար հասանելի կլինի որպես ընտրանք, եթե երկար հերթեր կամ սպասելու կարիք առաջանա:
- **Նպատակակետի կայանի գործավար** – Հրահանգում է ընտրողներին COVID-19-ի ուղեցույցների վերաբերյալ և ապահովում է, որ նրանք համապատասխանեն բոլոր ուղեցույցներին քվեարկության կենտրոն մտնելուց առաջ:
- **Գրանցման գործավար** – Գրանցում է ընտրողներին, նրանց տրամադրում է քվեաթերթիկ և ուղղորդում է նրանց դեպի քվեարկության համար նախատեսված տարածք:
- **Քվեարկության տարածքի հսկիչ** – Ուղղորդում է ընտրողներին դեպի հասանելի BMD, վերացնում է BMD-ին առնչվող հիմնական հարցերը/խնդիրները և օգնում է հերթի հսկիչին, ըստ անհրաժեշտության:
- **Տեխնիկական սպասարկման տեխնիկ** – Վերացնում է սարքավորումների խնդիրները քվեարկության կենտրոնում (օրինակ՝ BMD-ներ, ընտրությունների էլեկտրոնային գրանցամատյաններ, երթուղղիչներ և այլն): Օգնում է հսկողության շղթային ընտրությունների բոլոր սարքավորումների և գրառումների սպասելաժամանակների, քվեաթերթիկների հաշվարկման և RR/CC-ի համակարգերում առաջացող պատահարների հարցում:

- **Ժամանակավոր/VBM-ի գործավար** – Օգնում է ժամանակավոր և CVR-ի ընտրողներին, ստանում է VBM-ի ծրարներ ընտրողներից և տրամադրում է «Ես քվեարկեցի» ստիկերները (հայեցողական պաշտոն):

3-B ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վարչաշրջանի յուրաքանչյուր քվեարկության կենտրոն կունենա BMD-ներ, որոնք քվեարկության ամբողջությամբ մատչելի սարքեր են և թույլ են տալիս բոլոր ընտրողներին նշել իրենց քվեաթերթիկն ինքնուրույն և գաղտնի կերպով: Բացի այդ, ընտրությունների բոլոր աշխատակիցները կստանան վերապատրաստում, թե ինչպես կարելի է օգնել հաշմանդամություն ունեցող ընտրողներին քվեարկության գործընթացի յուրաքանչյուր փուլում: Սա ներառում է շեշտադրված վերապատրաստում BMD-ի վերաբերյալ հասանելի առանձնահատկությունների մասին, որը շատ օգտակար կլինի հաշմանդամություն ունեցող ընտրողների համար: Լրացուցիչ մատչելիության սարքեր, որոնք հասանելի կլինեն քվեարկության բոլոր կենտրոններում, ներառում են խոշորացնող ապակիները, ստորագրության ուղեցույցները, գրիչի բռնակները, 20/20 գրիչները և մայթեզրից կատարվող քվեարկության ծառայությունները:

Քվեարկության կենտրոնները նաև առաջարկում են քվեարկություն մայթեզրից: Այս ծառայությունը նախատեսված է այն ընտրողների համար, ովքեր դժվարին ժամանակներում են կամ ի վիճակի չեն մուտք գործել քվեարկության կենտրոն: Քվեարկություն մայթեզրից տարբերակն ընտրողներին թույլ է տալիս քվեարկել իրենց փոխադրամիջոցի հարմարությունից ելնելով՝ զանգահարելով այն հեռախոսահամարով, որը հստակ փակցված է քվեարկության կենտրոնից դուրս գտնվող նախատեսված վայրում, իսկ ընտրության աշխատակիցն ընտրության նյութերը մոտեցնում է ընտրողի փոխադրամիջոցին, որպեսզի նա կարողանա ինքնուրույն և գաղտնի կերպով նշել իր քվեաթերթիկը: Ընտրողների ընտրանքները ներառում են իրենց քվեաթերթիկի նշում՝ օգտագործելով ISB կամ թղթային քվեաթերթիկ:

3-C ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԱՍԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես նշվել է 3-A բաժնում, քվեարկության կենտրոնները կլինեն տարբեր չափերի: Ամեն դեպքում, կախված սենյակի դասավորվածությունից և յուրաքանչյուր քվեարկության կենտրոնին բնորոշ տարբեր բնութագրերից՝ յուրաքանչյուր քվեարկության կենտրոնում BMD-ների հստակ թիվը կարող է տատանվել: Յուրաքանչյուր քվեարկության կենտրոնի կտրամադրվի դասավորվածության գծագիր՝ ապահովելու համար, որ BMD-ները դասավորված լինեն այնպես, որն ընտրողին թույլ է տալիս կատարել գաղտնի և անկախ քվեարկություն: Դասավորվածությունները կարող են նաև զգայուն բնույթ ունենալ ընտրողների մատչելիության կարիքների առումով և կհամապատասխանեցվեն այնպես, որպեսզի տեղավորեն յուրաքանչյուր վայրի փոփոխական ձևերը և սենյակի չափերը: Ստորև կտեսնեք գծագիր, որը ցույց է տալիս քվեարկության փոքր կենտրոնի դասավորվածության օրինակ:

Քվեարկության կենտրոնի դասավորվածության օրինակ



ԲԱԺԻՆ 4 – ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

4-A ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Վարչաշրջանի քվեարկության կենտրոններում անցկացվող ողջ քվեարկությունը պետք է հետևի Նահանգում հաստատված անվտանգության ստանդարտներին, RR/CC-ի անվտանգության ընթացակարգերին, California-ի ընտրական օրենսգրքին և California-ի քվեարկության համակարգի օգտագործման ընթացակարգերին: Սա ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով, ապահովելու, որ քվեարկության կենտրոնի բոլոր սարքավորումները կապարկնքված լինեն, մատակարարվեն, պահվեն և օգտագործվեն՝ համաձայն այս կանոնակարգերի, և հսկողության այդ շղթան փաստաթղթավորված լինի բոլոր սարքավորումների և քվեաթերթիկների վարման համար: Բացի այդ, ընթացակարգերը պահանջում են, որ ընտրությունների առնվազն երկու աշխատակից ներկա լինի, երբ տեղամասը բաց է:

4-B ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ անձնակազմը, այդ թվում քվեարկության կենտրոնում աշխատողները և տեխնիկական ու համապատասխանության աջակցություն տրամադրողները, պետք է հաճախեն ընդարձակ վերապատրաստման՝ քվեարկության սարքավորումների շահագործման, քվեարկության կենտրոնի

կարգավորման, ընտրողներին աջակցելու և ընթացք տալու, զգայուն սարքավորումների ապահովման և արտակարգ իրավիճակի դեպքում պատշաճ ընթացակարգերի վերաբերյալ:

Քվեարկության կենտրոնի բոլոր ղեկավարներին և տեխնիկական սպասարկման տեխնիկներին (FST) կտրամադրվի սմարթֆոն՝ ըստ անհրաժեշտության ընտրությունների անձնակազմի հետ կապվելու համար: Հեռախոսներն ամուր են, հուսալի և վիրտուալ առումով չկոտրվող սարքեր՝ նախատեսված ծայրահեղ պայմանների համար: Այս սարքերը հնարավորության կտան ղեկավարներին և FST-ներին արագ հաղորդակցվել և թույլ կտան RR/CC-ին միաժամանակ ուղարկել թարմացումներ և հաղորդագրություններ բոլոր քվեարկության կենտրոններին: Անվտանգության միջոցառումները նույնպես ներդրվել են՝ ապահովելու, որ RR/CC-ն կարողանա հեռահար կերպով անջատել սարքերը, փոխել հեռախոսների կազմաձևումը և կողպել հեռախոսները, եթե դրանք գողանան կամ կորչեն:

RR/CC-ն կունենա զանգերի վերապատրաստված կենտրոն, որի անձնակազմը պատրաստ և հասանելի է աջակցելու զանգողներին խնդիրների լուծման հարցում: Ընտրությունների բոլոր աշխատակիցները և տեխնիկական ու համապատասխանության աջակցության տրամադրողները կվերապատրաստվեն արտակարգ իրավիճակների ընթացակարգերի վերաբերյալ և նրանց կտրամադրվի վերապատրաստման ձեռնարկ արտակարգ իրավիճակի դեպքում քվեարկության կենտրոնի շահագործման և ընտրողներին հրահանգներ տալու համար:

4-C ԿԻԲԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Կիբերանվտանգությունը և ընտրությունների ամբողջականության պահպանումը RR/CC-ի խիստ կարևոր առաջնահերթություններն են: RR/CC-ի տեղեկատվական տեխնոլոգիական թիմն ունի Կառավարման, ռիսկի և համապատասխանության (GRC) ընդունված շրջանակ՝ համաձայնեցնելու ոլորտի ստանդարտների և լավագույն գործելակերպի հետ՝ բացի RR/CC-ի հասունության մակարդակը բարելավելուց: RR/CC-ն գործարկել է ցանցային անվտանգություն և կտրամադրի շարունակական մշտադիտարկում, որպեսզի ակտիվորեն պատասխանի կասկածելի կամ չարամիտ դեպքերին: Բացի այդ, էլեկտրոնային գրանցամատյանները կառավարվում են կենտրոնացված կերպով և նշված են երթուղղիչների սպիտակ ցուցակներում, միացումները կոդավորված են՝ օգնելու կիրառել կոդավորումը հանգստի, շարժման և փոխադրման ընթացքում, իսկ համատեղ օգտագործվող բանալիները փոփոխվում են յուրաքանչյուր տեղամասի համար: Վերջապես ընտրություններին բնորոշ անվտանգության շահագործման կենտրոնը (SOC) հաստատվել է, որպեսզի ապահովի շարունակական մշտադիտարկում՝ ակտիվորեն պատասխանելու կասկածելի կամ չարամիտ դեպքերին:

4-D ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

RR/CC-ն ունի հաստատուն գործողությունների պլան չնախատեսված իրավիճակների համար, որպեսզի լուծի քվեարկության կենտրոնի որևէ խաթարում: Ընդհանուր առմամբ, եթե մեկ քվեարկության կենտրոնն էապես խաթարվում է, RR/CC-ն անմիջապես կտեղակայի շարժական քվեարկության կենտրոն: Այս շարժական քվեարկության կենտրոնը բաղկացած է անձնակազմից և այն բոլոր սարքավորումներից, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային գրանցամատյանները և BMD-

ները կարգավորելու համար: Մինչ շարժական քվեարկության կենտրոնը տեղակայվում և կարգավորվում է, ընտրությունների աշխատակիցները կվերաուղղորդեն ընտրողներին մոտակա քվեարկության կենտրոններ:

Ըստ անհրաժեշտության RR/CC-ն նաև կտեղեկացնի իրավապահ մարմիններին, պետքարտուղարի գրասենյակին և կտրամադրի լրատվության թարմացումներ՝ ապահովելու, որ ընտրողները տեղեկացված լինեն: Եթե բնական աղետը կամ այլ խոչընդոտ ազդում է քվեարկության կենտրոնի կամ քվեաթերթիկների հանձնման արկղի կենսունակության, լրացուցիչ ծանուցումների, ցուցանակի վրա, ապա անձնակազմն առկա կլինի, որպեսզի ուղղորդի ընտրողներին որևէ այլընտրանքային տեղամաս:

Եթե քվեարկության կենտրոնի բոլոր աշխատանքները պետք է դադարեցվեն քվեարկության տվյալ ժամանակահատվածի համար, ապա ընտրությունների աշխատակիցները պետք է անմիջապես ապահովեն այդ քվեարկության կենտրոնի քվեարկման համար նախատեսված սարքավորումներով և հաշվի առնեն քվեարկության բոլոր նյութերը՝ համաձայն California-ի ընտրական օրենսգրքի և Քվեաթերթիկների արտադրման և վերջնականացման ուղեցույցների: RR/CC-ն կփորձի բացել քվեարկության փոխարինող կենտրոն և լայնորեն կտարածի տվյալ փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը հանրության շրջանում:

ԲԱԺԻՆ 5 – ԱՌԱՋ ԸՆԹԱՆԱԼՈՎ

Los Angeles վարչաշրջանի ընտրազանգվածը շարունակում է աճել և դառնալ ավելի բազմազան: Համայնքները, որոնցում նրանք գործում են, նույնպես շարունակում են փոփոխվել՝ տեխնոլոգիական առումով դառնալով ավելի հուսալի և կարևորելով առաջնահերթությունը: RR/CC-ն կշարունակի լինել գործուն, ճկուն և արձագանքող՝ համապատասխանեցնելով այս պլանն այնպես, որպեսզի լավագույնս ծառայի Վարչաշրջանի ընտրողներին: